«Եկի ի տեսութիւն սուրբ ուխտիս Սանահնիս, զոր շինեալ էր թագաւորն Աշոտ և Խոսրովանոյշ թագուհին՝ հայրն և մայրն իմ»[1]։

Իսկ Բարսեղ Կեսարացու ձեռագիրն ընդօրինակող Սիմեաւն կրոնաւորը իր հիշատակարանում գրում է.

«Եւ անարժանս ի կրօնաւորաց, փցուն գրիչս Սիմեաւն, ի թուականութեանս հայոց ՆԻԱ (421), ի նորաշէն վանքս կոչեցեալ Սանահին, հրամանաւ հաւր իմոյ Յովհաննիսի, որ էր վանիցս շինութիւն ամք Զ (6), զոր շինեաց բարեպաշտ թագուհին Խոսրովանոյշ՝ ամուսինն Աշոտոյ հայոց շահնշահի, որդի Սմբատայ Բագրատունւոյ հայոց թագաւորի, և յառաջին ամի հայրապետութեան հոգևոր հաւրն հանուրց տեառն Խաչկայ արժանաւոր վերադիտողի»[2]։

Այս փաստաթղթերի հիման վրա եզրակացնում ենք, որ Սանահնի վանքը հիմնադրել են Աշոտ Ողորմածն ու նրա կին Խոսրովանուշ թագուհին։ Սակայն, կառուցման հոգսը գլխավորապես ընկած է եղել Խոսրովանուշի վրա, որ գործել է իր և իր ամուսնու անունից։ Այդ է պատճառը, որ իբրև վանքի հիմնադիր հաճախ հիշատակել են միայն թագուհու անունն առանց Աշոտի, և այդ ոչ միայն ուշ ժամանակներում, այլ նաև վանքի հիմնադրման առաջին իսկ տարիներին գրված վերոհիշյալ հիշատակարանում։

Մեզ համար մեծ կարևորություն ունեն հիշատակարանում մեջ բերված թվական տվյալները։ Այդտեղ նշված է, որ հայոց ՆԻԱ (421+551=972) թվականը վանքի շինության վեցերորդ տարին է, ուրեմն վանքը կառուցվել է 972—6=966 կամ հայոց ՆԺԵ (415) թվականին։ Ճիշտ նույն թվականն է տալիս Սանահնի հիմնարկությունը նշող մատենագիրներից հնագույնը՝ Սամուել Անեցին։ Մնացած մատենագիրները բոլորն էլ Սանահնի հիմնադրման թվականը վերցրել են Սամուել Անեցուց, բայց իրենք կամ իրենց հետագայի արտագրողներն անուշադրության պատճառով աղավաղել են, որի հետևանքով Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության մեջ ՆԺԵ-ն դարձել է ՆԺԷ և ստացվել է մեր 968 թվականը։ «Քոթուկի» մի տեղում միավորի Ե թվականը մոռացմամբ, չարտագրելու պատճառով Սանահնի հիմնարկությունը վերագրվել է հայոց ՆԺ (410) կամ մեր 961 թվականին։ Ուրեմն ճիշտը պետք է համարել հայոց ՆԺԵ (415+551=966) թվականը։

Հետագայում աղավաղվել է նաև Սամուել Անեցու այն վկայությունը, թե Սանահինը 10 տարի առաջ է շինվել Հաղբատից։ Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության մեջ և մի քանի այլ տեղերում հակառակն է գրված, որ Հաղբատը 10 տարով առաջ է շինվել, քան Սանահինը։ Այդ սխալն էլ դարձյալ արտագրողների անուշադրության հետևանքով է առաջ եկել[3]։ Այս բոլորից եզրակացնում ենք, որ թեև Սանահնում Աբասի թագավորության ժամանակ է կառուցված եղել Աստվածածին եկեղեցին Բյուզանդիայից հալածված հոգևորականների ձեռքով, բայց ժամանակակիցների կողմից դա դեռևս վանքի հիմնադրությունը չի համարվել։ Վանքի հիմնադրությունը, այսինքն Սանահնի գլխավոր եկեղեցու շինությունը, միաբանության հաստատումը և կալվածքների հատկացումը տեղի են ունեցել 966 թ. Խոսրովանուշ թագուհու և Աշոտ Ողորմածի ջանքերով, որտեղ թագուհին շատ ավելի գործոն դեր է կատարել։

Աշոտ Ողորմածի կողմից վանքին կալվածքներ հատկացնելու մասին տեղեկություններ ունենք Սմբատ Տիեզերակալի նույն հրովարտակի մեջ, որտեղ նա գրում է, որ ծնողները՝ Աշոտն ու Խոսրովանուշը, Սանահնի վանքը հարստացրել էին «յոլով Գեղորէիւք և հայրենօք, սարով և ձորով» («Քոթուկ», էջ 49)։ Իսկ ինքը՝ Սմբատը, 979 թվականին այցելության գալով Սանահին և այդ վանքը դարձնելով եպիսկոպոսական աթոռանիստ վայր, ընդարձակ վիճակ է շնորհել նրան։

[1] «Քոթուկ», էջ 47։

[2] Նույն տեղում, էջ 37—38։

[3] Տեղում ժողովրդական ստուգաբանությամբ Սանահին բառը բացատրում են՝ Սա հին է, քան նա, այսինքն սա՝ Սանահնի վանքը՝ հին է, քան նա՝ Հաղբատի վանքը։